



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծով

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeoghiche.org.uk
www.styeoghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

05th April 2020

Bulletin 14/2020

Palm Sunday—Christ's Triumphal Entry into Jerusalem

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՍԷ ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 4:4-7

Ամէն ատեն ուրախացէր Տէրոջմով. դարձեալ կ'ըսէմ, ուրախացէ՛ք: Ձեր ազնուութիւնը թող յայտնի ըլլայ բոլոր մարդոց. Տէրը մօտ է: Մի՛ մտահոգուի՛ք որեւէ բանի համար. հապա ամէն բանի մէջ՝ աղօթքով ու աղերսանքով, շնորհակալութեամբ միասին, գիտցուցէ՛ք ձեր խնդրանքները Աստուծոյ. եւ Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն միտքէ գերիվեր է, պիտի պահպանէ ձեր սիրտերն ու մտածումները՝ Յիսուս Քրիստոսով:

The Epistle of St Paul to the Philippians 4:4-7

Rejoice in the Lord always. I will say it again: Rejoice! Let your gentleness be evident to all. The Lord is near. Do not be anxious about anything, but in every situation, by prayer and petition, with thanksgiving, present your requests to God. And the peace of God, which transcends all understanding, will guard your hearts and your minds in Christ Jesus.

ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍԱՌՈՒՄ ԱԷՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 20 :29-21:17

Երբ անոնք դուրս ելան Երիքովէն, մեծ բազմութիւն մը հետեւեցաւ անոր: Եւ ահա՛ երկու կոյրեր նստած էին ճամբային եզերքը. երբ լսեցին թէ Յիսուս կ'անցնի, աղաղակեցին. «Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, Դաւիթի՛ Որդի՛»: Բազմութիւնը կը յանդիմանէր զանոնք՝ որ լռեն, բայց անոնք ա՛լ աւելի կ'աղաղակէին. «Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, Դաւիթի՛ Որդի՛»: Յիսուս կանգ առնելով՝ կանչեց զանոնք եւ ըսաւ. «Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ ձեզի»: Ըսին անոր. «Տէ՛ր, թող մեր աչքերը բացուին»: Յիսուս գթալով՝ դպաւ անոնց աչքերուն. իսկոյն անոնց աչքերը բացուեցան, ու հետեւեցան անոր:



Triumphal entry of Jesus

Երբ մօտեցան Երուսաղէմի ու հասան Բեթփագէ, Ձիթենիներու լերան մօտ, Յիսուս որկեց երկու աշակերտ՝ ըսելով անոնց. «Գացէ՛ք այդ ձեր դիմացի գիւղը, ու իսկոյն պիտի գտնէք կապուած էջ մը, եւ անոր հետ՝ աւանակ մը. արձակեցէ՛ք զանոնք ու բերէ՛ք ինձի: Եթէ մէկը բան մը ըսէ ձեզի, ըսէ՛ք. “Տէրոջ պէտք են”, եւ իսկոյն պիտի որկէ զանոնք»: Այս ամէնը կատարուեցաւ, որպէսզի իրագործուի մարգարէին միջոցով ըսուած խօսքը.

«Ըսէ՛ք Սիոնի աղջիկին. “Ահա՛ Թագաւորդ կու գայ քեզի, հեզ եւ հեծած իշու վրայ, իշու ձագի՛ աւանակի վրայ”»:

Աշակերտները գացին, եւ ըրին ինչպէս Յիսուս պատուիրած էր իրենց. բերին էջն ու աւանակը, որին անոնց վրայ իրենց հանդերձները, եւ նստաւ անոնց վրայ: Ահագին բազմութիւն մը փռեց իր հանդերձները ճամբային վրայ. ուրիշներ ճիւղեր կը կտրէին ծառերէն ու կը տարածէին ճամբային վրայ:

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

Եւ առջեւէն գացող ու իրեն հետեւող բազմութիւնները կ'աղաղակէին. «Ովսաննա՛ Դաւիթի Որդիին: Օրհնեալ է ան՝ որ կու գայ Տէրոջ անունով: Ովսաննա՛ ամենաբարձր վայրերուն մէջ»:

Երբ ան մտաւ Երուսաղէմ, ամբողջ քաղաքը շարժեցաւ եւ ըսաւ. «Ո՛վ է ասիկա»: Բազմութիւնը ըսաւ. «Այս է Յիսուս մարգարէն՝ Գալիլեայի Նազարէթէն»:

Յիսուս մտաւ Աստուծոյ տաճարը, դուրս հանեց բոլոր անոնք՝ որ տաճարին մէջ կը ծախէին ու կը գնէին, եւ տապալեց լուծայափոխներուն սեղաններն ու աղանի ծախողներուն աթոռները, եւ ըսաւ անոնց. «Գրուած է. “Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի”, բայց դուք աւազակներու քարայր ըրիք զայն»:

Կոյրեր ու կաղեր եկան իրեն՝ տաճարին մէջ, եւ բուժեց զանոնք: Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան անոր գործած սքանչելիքները, եւ մանուկները՝ որոնք տաճարին մէջ կ'աղաղակէին. «Ովսաննա՛ Դաւիթի Որդիին», ընդվզեցան եւ ըսին անոր. «Կը լսե՞ս ի՞նչ կ'ըսեն ատոնք»: Յիսուս ըսաւ անոնց. «Այո՛, բնաւ չե՛ք կարդացած գրուածը. “Երախաներուն ու ծծկերներուն բերանով գովաբանութիւն կատարեցիր”»: Ապա ձգեց զանոնք, գնաց քաղաքէն դուրս՝ Բեթանիա, ու կեցաւ հոն գիշերը:

Առտուն, մինչ կը վերադառնար քաղաքը, անօթեցաւ: Ու ճամբան տեսնելով թզենի մը՝ քովը գնաց: Ոչինչ գտաւ անոր վրայ՝ տերեւներէն զատ, եւ ըսաւ անոր. «Ասկէ ետք ո՛չ մէկ պտուղ ըլլայ վրադ՝ յաւիտեան»: Թզենին անմիջապէս չորցաւ:

Երբ աշակերտները տեսան, զարմացան ու ըսին. «Ի՞նչպէս թզենին անմիջապէս չորցաւ»: Յիսուս պատասխանեց անոնց. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Եթէ հաւատք ունենաք ու չտատամսիք, ո՛չ միայն պիտի ընէք այդ թզենիին եղածը, այլ նաեւ եթէ ըսէք այս լերան. “Եի՛ր ու ծո՛վը նետուէ”, պիտի ըլլայ”: Ամէն ինչ որ կը խնդրէք աղօթքի մէջ՝ հաւատքով, պիտի ստանաք»:

Երբ ան եկաւ տաճարը, քահանայապետներն ու ժողովուրդին երեցները մօտեցան անոր՝ մինչ կը սորվեցնէր, եւ ըսին. «Ի՞նչ իշխանութեամբ կ'ընես այդ բաները. ո՛վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը»: Յիսուս պատասխանեց անոնց. «Ես ալ ձեզի՛ հարցնեմ բան մը. եթէ ըսէք ինծի, ես ալ պիտի ըսեմ ձեզի թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այդ բաները: “Յովհաննէսի մկրտութիւնը ուրկե՛ր էր, երկինքէ՞ն՝ թէ մարդոցմէ՞ն»: Անոնք կը մտածէին իրենց մէջ՝ ըսելով. «Եթէ պատասխանենք. “Երկինքէն”, պիտի ըսէ մեզի. “Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր”: Իսկ եթէ պատասխանենք. “Մարդոցմէ”, բազմութենէն կը վախճանք, որովհետեւ բոլորն ալ մարգարէ կը համարեն Յովհաննէսը»: Ուստի պատասխանեցին Յիսուսի. «Չենք գիտեր»: Ինք ալ ըսաւ անոնց. «Ես ալ չեմ ըսեր ձեզի թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այդ բաները»:

«Ի՞նչ է ձեր կարծիքը. մարդ մը ունէր երկու զաւակ: Առաջինին ըսաւ. “Որդեա՛կ, գնա՛, գործէ՛ այսօր այգիիս մէջ”: Ան ալ պատասխանեց. “Չեմ ուզեր երթալ”: Բայց յետոյ զոջաց ու գնաց: Միւսին ալ գնաց եւ նոյնը ըսաւ: Ան ալ պատասխանեց. “Կ'երթամ, տէ՛ր”, սակայն չգնաց: Այս երկուքէն ո՛վ գործադրեց իր հօր կամքը»: Ըսին անոր. «Առաջի՛նը»: Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի թէ մաքսաւորներն ու պոռնիկները ձեզմէ առաջ պիտի մտնեն Աստուծոյ թագաւորութիւնը: Արդարեւ Յովհաննէս արդարութեան ճամբայով եկաւ ձեզի, եւ դուք չհաւատացիք անոր. բայց մաքսաւորներն ու պոռնիկները հաւատացին անոր, իսկ դուք տեսաք եւ յետոյ չզոջացիք՝ որ հաւատայիք անոր»:

«Լսեցէ՛ք ուրիշ առակ մըն ալ: Հողատէր մը կար՝ որ այգի մը տնկեց, ցանկով պատեց զայն, հնձան փորեց անոր մէջ, աշտարակ կառուցանեց, մշակներու յանձնեց զայն եւ ճամբորդեց: Երբ պտուղի ատենը մօտեցաւ՝ իր ծառաները որկեց մշակներուն, որալեւզի ստանան անոր պտուղները: Մշակները բռնեցին անոր ծառաները, մէկը ծեծեցին, միւսը սպաննեցին, ուրիշ մը քարկոծեցին: Դարձեալ ծառաներ որկեց՝ առաջիններէն շատ, եւ անոնց ալ նոյնպէս ըրին: Ամենէն ետք իր որդին որկեց անոնց՝ ըսելով. “Թերեւս պատկառին որդիէս”: Բայց մշակները՝ երբ տեսան որդին՝ ըսին իրարու. “Այս է ժառանգորդը. եկէ՛ք սպաննենք զայն եւ տիրանանք անոր ժառանգութեան”: Ու բռնեցին զայն, այգիէն դուրս հանեցին եւ սպաննեցին:

The Holy Gospel of Jesus Christ according to Mathew 20 :29-21:17

Two Blind Men Receive Sight

As Jesus and his disciples were leaving Jericho, a large crowd followed him. Two blind men were sitting by the roadside, and when they heard that Jesus was going by, they shouted, “Lord, Son of David, have mercy on us!”

The crowd rebuked them and told them to be quiet, but they shouted all the louder, “Lord, Son of David, have mercy on us!”

Jesus stopped and called them. “What do you want me to do for you?” he asked.

“Lord,” they answered, “we want our sight.”

Jesus had compassion on them and touched their eyes. Immediately they received their sight and followed him.

Jesus Comes to Jerusalem as King

As they approached Jerusalem and came to Bethphage on the Mount of Olives, Jesus sent two disciples, saying to them, **“Go to the village ahead of you, and at once you will find a donkey tied there, with her colt by her. Untie them and bring them to me. If anyone says anything to you, say that the Lord needs them, and he will send them right away.”**

This took place to fulfil what was spoken through the prophet:

“Say to Daughter Zion, ‘See, your king comes to you, gentle and riding on a donkey, and on a colt, the foal of a donkey.’” ^a

The disciples went and did as Jesus had instructed them. They brought the donkey and the colt and placed their cloaks on them for Jesus to sit on. A very large crowd spread their cloaks on the road, while others cut branches from the trees and spread them on the road. The crowds that went ahead of him and those that followed shouted,

“Hosanna ^b to the Son of David!” **“Blessed is he who comes in the name of the Lord!”** ^c

“Hosanna ^d in the highest heaven!”

When Jesus entered Jerusalem, the whole city was stirred and asked, **“Who is this?”**

The crowds answered, **“This is Jesus, the prophet from Nazareth in Galilee.”**

Jesus at the Temple

Jesus entered the temple courts and drove out all who were buying and selling there. He overturned the tables of the money changers and the benches of those selling doves. **“It is written,”** he said to them, **“‘My house will be called a house of prayer,’ ^e but you are making it ‘a den of robbers.’”** ^f

The blind and the lame came to him at the temple, and he healed them. But when the chief priests and the teachers of the law saw the wonderful things he did and the children shouting in the temple courts, **“Hosanna to the Son of David,”** they were indignant.

“Do you hear what these children are saying?” they asked him.

“Yes,” replied Jesus, **“have you never read, ‘From the lips of children and infants you, Lord, have called forth your praise’ ^g ?”**

And he left them and went out of the city to Bethany, where he spent the night.

Ղազարոսի հարության հիշատակության օր

Մեծ Պահքի 41-րդ օրը, Հայաստանյայց Առաքելական եկեղեցում Ղազարոսի հարության հիշատակի օրն է։ Ղազարոսի հարության մասին պատմվում է Մր. Հովհաննեսի Ավետարանում (Տես Հովհ. 11:1-46)։ Ղազարոսը Հիսուս Քրիստոսին սիրելի մի ընտանիքից էր։ Նա Մարիամի և Սարթայի եղբայրն էր, որ մահացավ հիվանդության պատճառով։ Քրիստոս նրան հարություն է տալիս՝ ապացուցելով, որ ինքն է կյանքը և հարությունը։ Ղազարոսի հարության մասին պատմող դրվագը գեղեցիկ վերնագիր ունի՝ «Եվ Հիսուս արտասպեց...»։ Հրեաները, տեսնելով Հիսուսի արտասպելը, ասում են. «Տեսեք, թե ինչքան էր սիրում նրան»։ Քրիստոսի արտասպելը՝ բոլորի հանդեպ Նրա հետագայում անսահման սիրո վկայությունն է, իսկ Ղազարոսի հարությունը խորհրդանշում է նաև ննչեցյալների համընդհանուր հարությունը։



Raising of Lazarus

Commemoration of Raising of Lazarus

On the 41st day of the period of Great Lent, the Armenian Church commemorates Lazarus being raised from the dead.

The Gospel according to St. John (Jn 11:11-46) relates the story. Lazarus was from a family loved by Jesus Christ. He was the brother of Mary and Martha, who often received Jesus. Lazarus dies after succumbing to an illness. Upon hearing that His friend has died, Christ goes to visit the family, and says to Martha, **“I am the Resurrection and the Life. Whoever believes in me will live, even though he dies...”** Christ asks Martha if she believes this, to which she replies, **“Yes, Lord. I do believe that you are the Messiah, who was to come into the world.”** Christ, standing before the grave, commands Lazarus to come forth, and he appears, being restored to life. By doing so, Christ proves that He is, in fact **“Life and Resurrection”**.

The Gospel story telling about the raising of Lazarus contains the passage: **“Jesus wept.”** The Jews, seeing Jesus expressing grief, said: **“See how much he loved him!”**

The raising of Lazarus is an example of the coming resurrection of all those who have fallen asleep in Christ. The weeping of Jesus demonstrates His great love towards mankind.

Ծաղկազարդ. Հիսուսի հաղթական մուտքը Երուսաղեմ

Ս. Հարությանը նախորդող կիրակի օրը Հայ Առաքելական եկեղեցին նշում է Ծաղկազարդը, որը խորհրդանշում է Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ծաղկազարդն հռչակել է որպես մանուկների օրհնության օր, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Տիրոջ Երուսաղեմի տաճար մտնելու ժամանակ մանուկներն աղաղակում էին ասելով. «Օրհնություն և, Դավթի որդուն» (Մատթ. 21:15): Հիսուսը եկավ ավետարանելու աղքատներին, բժշկելու սրտով բեկվածներին, գերիներին ազատելու և կույրերին տեսողություն պարգևելու, ինչպես մարգարեացել էր Եսային: Շատ կույրեր, դիմելով Հիսուսին, բժշկվեցին: Հիսուսի մուտքը Երուսաղեմի ժողովուրդն ընդունել է խանդավառությամբ՝ ձիթենու և արմավենու ճյուղերը, ինչպես նաև իրենց զգեստները փռելով ճանապարհի վրա և աղաղակելով «Ովսաննա Բարձյալին, օրհնեալ լինի Նա, ով գալիս է Տիրոջ անունով, օրհնեալ լինի մեր հոր՝ Դավթի թագավորությունը, որ գալիս է: Խաղաղություն երկնքում և Փառք բարձունքներում» (Մարկ. 10:9-10): Համաձայն եկեղեցու հայրերի ուսուցումների, Հիսուսի առջև հանդերձներ նետելը խորհրդանշել է մեղքերից ազատվելը: Ոստեր և ճյուղեր ընծայելը խորհրդանշել է առանձնակի պատիվներ և հանդիսավորություն:

Ձիթենին համարվել է իմաստության, խաղաղության, հաղթանակի և փառքի խորհրդանշան: Ձիթենու և արմավենու ճյուղերի ընծայումը Քրիստոսին, որը մեռյալ Ղազարոսին հարություն տվեց, խորհրդանշում է մահվան հանդեպ հաղթանակը: Ծաղկազարդի նախօրեին՝ շաբաթ օրը, կատարվում է Ծաղկազարդի նախատոնակը, բացվում է խորանի վարագույրը, իսկ հաջորդ օրը ժամերգությունից հետո, բաց վարագույրով մատուցվում է Ս. Պատարագ: Ծաղկազարդի առավոտյան եկեղեցում օրհնում են ձիթենու կամ ուռենու ոստերը և բաժանում ժողովրդին: Ուռենու ոստերը, որոնք անպտուղ են, խորհրդանշում են հեթանոսներին և պտղաբերեցին միայն Քրիստոսին ընծայվելուց հետո: Ոստերի փափկությունը խորհրդանշում է Քրիստոսին հետևողների խոնարհությունը: Ուռենու ճյուղերը մեր ընծաներն են Տիրոջը, ինչպես Ծննդյան օրը մոգերի բերած ընծաները: Հիսուս Քրիստոսին ճանաչում ենք որպես Թագավոր՝ հաղթական պսակը գլխին, անեծքը վերացնող և կենդանություն պարգևող:

Այդ օրը եկեղեցիներում մանուկների օրհնության կարգ է կատարվում:

Palm Sunday

One week before the Feast of the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ, the Armenian Church celebrates the Feast of Palm Sunday, celebrating the Triumphant Entry of Christ into Jerusalem. Jesus comes into Jerusalem riding atop a donkey and the people gather to meet Him with reverence, thus fulfilling the words of the prophet from the Old Testament.

The Gospel of St. Matthew, in relating the story, refers to the prophecy, “All this was done, that it might be fulfilled, that which was spoken by the prophet, saying “Tell the daughter of Zion, Behold, your king is coming to you! He is humble and sitting on an ass, and a colt, the foal of an ass.” (Mt 21:4-5).

On His arrival, a large crowd of people gathers to greet Him, and spread their cloaks on the road before Him, while others cut branches from palm trees and place them on the path. The crowd exclaims: “Hosanna! Blessed is the King of Israel that comes in the Name of the Lord” (Jn 12:13).

On Palm Sunday, churches are decorated with branches from willow trees and palm trees. Following a solemn morning service, the blessed branches are distributed to the faithful. This passage from the Gospels reminds each of us about the Coming of Christ, and teaches us to live in a manner that can make us worthy to stand before the Lord and exclaim:

HOLY WEEK

(look at the full timetable for all services at St Yeghiche Church and join us on our facebook page for live streaming)

Although the Holy Week is a very short period, it is the most eventful and important Church period for all Christians. The Church follows closely the last scenes of our Lord's life. On the last three days of the Holy Week, the Church even reproduces, in a kind of sacred drama, the last acts of the Passion of our Lord.

The Holy Week begins with **Palm Sunday**, which commemorates the last and solemn entry of our Lord into the city of Jerusalem, five days prior to His death. It was a triumphant occasion for Jesus and His disciples. The multitude came out of town to welcome Him, waving palms and olive branches on this Sunday.

Holy Monday The Gospel readings tell us about the story of the “cursed fig tree.” On his way back to Jerusalem Jesus was hungry. He saw a fig tree by the side of the road and went to it, but found nothing on it except leaves. So He said to the tree, “You will never again bear fruit!” At once the fig tree dried up. The disciples saw this and were astounded. “How did the fig tree dry up so quickly?” they asked. Jesus answered, “If you believe you will receive whatever you ask for in prayer” (Mt 21:22). According to the historian Stepannos of Syounie, living in the 7th century, the fig tree “is the circumcised people to whom hungry Jesus came and found no fruit on it, but only seeming life, so as the result of His coming the tree dried up.”

Holy Tuesday “The Parable of the Ten Virgins” is commemorated (Mt 25:1-13). This parable from the Gospel, tells the story about the five foolish and the five wise virgins. The message exhorts us to be vigilant and prepared for the Coming of Our Lord Jesus Christ.

On Holy Tuesday, during the Evening Service, ten young women approach the Holy Altar of the Church. Five of the girls have burning candles or oil lamps in their hands, symbolizing the wise maidens, and the other five have extinguished candles or unlit lamps in their hands, symbolizing the foolish maidens.

Holy Wednesday Holy Wednesday anointing of Jesus Christ by a woman in Bethany and the Betrayal of Christ are commemorated.

In the Gospel of St. Matthew, we learn that while Jesus was dining with his Apostles, a woman came in with an alabaster jar filled with valuable perfume. She opened the jar and poured the perfume on Jesus’ head. The disciples witnessing this act become upset, as the perfume could have been sold and the proceeds could have been given to the poor. Jesus hearing their displeasure said, “Why do you trouble the woman? For she has done a good work for me. For you always have the poor with you; but me you do not always have me.” The woman’s actions foreshadowed His preparation for burial. “For in that she has poured this ointment on my body, she did it for my burial,” said Christ (Mt 26:6-13).

The Gospel reading on Holy Wednesday exhorts us not to abuse the love and promise of God, and by remembering His tortures and death for the sake of mankind, to never deviate from the correct path which is to worship and give glory to Him alone.

Holy Thursday Holy Thursday is dedicated to the Last Supper of our Lord Jesus Christ and symbolizes the establishment of the Sacrament of Communion. In the morning, Divine Liturgy is celebrated in our churches. In the evening takes place the dramatic ceremony of the **Washing Of Feet**, in memory of our Lord’s washing of the feet of His disciples, giving a sublime lesson of humility. During the night of Maundy Thursday, an all night vigil is kept, in memory of the last sleepless night of our Lord on earth. This nocturnal service in Armenian is called ‘Khavaroum’, i.e. Darkness. During the service a time comes when all the lights of the church are put out, commemorating the awful darkness which time comes when all the lights of the church are put out, commemorating the awful darkness which fell upon the earth on the betrayal of the one who said, ‘I am the light of the world’. On this night the last words of Christ are read, long and mournful Church songs are sung, which aim specifically to portray the last sad hours of our Lord at Gethsemane and before the human law courts.

Good Friday is the most solemn and sad day for Christians. It commemorates the unspeakable suffering, crucifixion, death and entombment of our Lord.

Holy Saturday, Eve of Feast of the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ or the Easter Feast, Candlelight Divine Liturgy On Holy Saturday, Christ’s destruction of hell and His liberation of righteous souls are commemorated. According to Church tradition, the new day begins following the Evening Service. An evening Divine Liturgy is celebrated, at the end of which the good tiding of the glorious resurrection of the Savior is proclaimed: “Christ is Risen from the dead; Blessed be the Resurrection of Christ!” The period of the Great Lent is thus concluded.

The feast of the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ or the Easter Feast starts on the eve and is continued after the midnight. On the eve a solemn Candlelight Divine Liturgy is celebrated and a solemn Divine Liturgy is celebrated. Following the conclusion of the Liturgy, the assembled faithful welcome each other on the occasion of the Glorious Resurrection of Christ conveying the great tiding: “Christ is Risen from the dead” and receive the answer: “Blessed is the Resurrection of Christ” and take lit candles home, symbolizing the Light that Christ brought into the world. The Divine Liturgy celebrated on the eve is the end of the Great lent and the start of the festive ceremonies.

Easter is the most solemn feast of the Church. It commemorates the glorious Resurrection of our Lord. The joyous character of Easter is shown by the drastic change in the atmosphere and tone of the worship in the Church.

Holy week Timetable at St Yeghiche Armenian Church

ՍԲ ԵՂԻՇԷ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԱՒԱԳ ՇԱԲԱԹՈՒ 2020

Palm Sunday ՇԱՂԿԱԶԱՐԴ	5th April	11:00 Divine Liturgy, Սուրբ Պատարագ 16:00 Opening of the Doors, Դռնբացիք
Maundy Thursday ԱՒԱԳ ՀԻՆՔՇԱԲԹԻ	9th April	16:30 Washing of the Feet (Ոսնորւայ) 20:00 Grand Vigil-(Խաւարում) Betrayal Service
Good Friday ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ	10th April	16:30 Evening Burial Service, Կարգ Թաղման Յիսուսի Քրիստոսի Procession around in the Church. Holy
Saturday ԱՒԱԳ ՇԱԲԱԹ	11th April	17:30 Divine Liturgy, Սուրբ Պատարագ
Easter Sunday ՍԲ ՉԱՏԻԿ	12th April	11:00 Divine Liturgy Սուրբ Պատարագ
Monday ՄԵՌԵԼՈՅ	13th April	11:00 Divine Liturgy followed by Hokehankist prayers

instead of the Blessing of the Graves. If you wish to include the names of your loved ones in the Hokehankist Prayers, please contact the Parish office on 02073738133 or Email us at info@styeghiche.org.uk

3: This week's message from our Priest in Charge

Մեկնություն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցումից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

«Կանչիր ցնծութեամբ, դուստրդ Երուսաղէմի, ահա գալիս է քո թագաւորը քեզ մօտ, քո արդար, փրկագործ ու խոնարհ թագաւորը՝ հեծած էշի, էշի քուռակի վրայ» (Չաքարիա 9:9):

Քրիստոսին հետեւող եղբայրներ եւ քոյրեր,

Քրիստոնեաներիս համար Երուսաղէմն աւելին է, քան պարզապէս աշխարհագրական վայր կամ քաղաք: Քրիստոս այն կոչեց մեծ Արքայի քաղաք (Մատթ. 5:35): Իր անունն իսկ, որ նշանակում է «խաղաղութեան քաղաք», բոլորովին այլ կրօնական զգացողութիւն է հաղորդում մարդուն: Փաստ է նաեւ այն, որ խաղաղութեան քաղաքը թերեւս երբեք բացարձակ իմաստով խաղաղութիւն չտեսաւ:

Այն սիրունեց ու կռուախնձոր դարձաւ իրեն սիրողների համար: Աստծոյ սուրբ քաղաք, որը, սակայն, խաչեց մարդացեալ Աստծուն.. Օծեալ Փրկչին սպասողներն իրենք խաչը հանել պահանջեցին ու սպանեցին նրան:

Խաղաղութեան արժեքը աւելի լաւ գիտեն մանաւանդ նրանք, որոնք անցել են պատերազմների ու մահերի դժոխքով: Նրանք գիտեն, որ խաղաղութիւնը ձրիաբար չի տրուում: Բոլոր հին կրօններում զոհաբերութեան հիմնական նպատակը Աստծոյ հետ հաշտեցումն է, խաղաղութիւն ունենալը:

Ի տարբերութիւն սրանց՝ միակ դէպքը, երբ ոչ թէ մարդիկ են զոհաբերում խաղաղութեան համար, այլ Աստուած ինքը, Քրիստոսի կամաւոր խաչելութիւնն է: Հանճարեղն այն է, որ Աստուած է միաժամանակ զոհ բերողը, զոհը եւ ընդունողը:

Գիտենք, որ խրայելացիները զատկական գառն գնում էին առաջին ամսուայ տասներորդ օրը եւ պահում մինչեւ տասնչորսերորդ օրը՝ մորթելու համար (Ելից 12:3-6): Սրա նմանութեամբ Քրիստոս էլ, իբրեւ աշխարհի համար զոհաբերուող **«Գառն Աստծոյ»**, կիրակի օրը մուտք գործեց Երուսաղէմ՝ ինքը դառնալով տիեզերական հաշտութեան եւ խաղաղութեան փրկագինը:

Պարզ մարդու զոհաբերումից գուցէ փրկուեն իր ժամանակի մարդկանց մի մասը, իսկ ամբողջ աշխարհի եւ բոլոր սերունդներ փրկագործութեան համար պարզ մարդու զոհաբերութիւնը բաւարար չէ: Այդ պատճառով կատարեալ մարդ եւ կատարեալ Աստուած Յիսուս Քրիստոսի զոհաբերութեամբ է, որ փրկուեցին թէ՛ իր ժամանակի մարդիկ, թէ՛ Իր մարդկային ծնունդից առաջ եղած եւ թէ՛ յետագայ բոլոր սերունդները: Դրա համար մարգարէների միջոցով դարեր առաջ նկարագրուած մուտքը Երուսաղէմ ուղղակի լոյ գեղեցիկ եւ ոգեւորիչ դիմաւորութիւն չէր: Այն միաժամանակ Իր մարդկային եւ աստուածային հեղինակութեան ցուցադրութիւնն ու հաղթահանդէսն էր, Երուսաղէմի պէս մարդկանց սիրտը մտնելու, դղրդացնելու, ցնցելու, իրական յեղափոխութիւն բերելու ազդարարումն էր:

Մեր մատենագրութեան մէջ Քրիստոսի յաղթական մուտքի այս օրը կոչւում է Արմաւենեաց տօն, քանի որ ժողովուրդը ցնծալից աղաղակներով եւ արմաւենու ճիւղերով ելաւ դիմաւորելու Յիսուսին, ինչպէս սովորաբար անում էին յաղթանակից վերադարձողներին: Առջեւից ու ետեւից, անգամ հրապարակներում մանուկների բերանից հնչում էին **«Օրհնութիւն Դաւթի Որդուն»**՝ յայտարարելով Նրան իբրեւ սպասուած Մեսիա: Քրիստոսի այս հեղինակաւոր մուտքի յաջորդ քայլը եղաւ տաճարի մաքրումը առեւտրականներից եւ լուծալափոխներից՝ մէջբերելով խօսքը, **«Գրուած է՝ “Իմ տունը պէտք է աղօթքի տուն լինի”, իսկ դուք աւազակների որջերի եք վերածել այդ»** (Ղուկ.19:46):

Սիրելիներ, իբրեւ ազատօրէն Աստծուն փարուած զաւակներ, եկէք մենք էլ Քրիստոսին դիմաւորող եւ ընդունող լինենք մեր մարմնեղէն տաճարներում՝ թոյլ տալով, որ ապաշխարութեան խարազանով մեր ներսն էլ մաքրուի եւ կրկին աղօթքի տուն եւ Հոգու բնակարան դառնայ: Չը լինի այնպէս, որ շատ դիմաւորողների պէս մենք էլ ասենք՝ **«օրհնեալ է Տիրոջ անունով եկողը»**, բայց ամբոխային հոսանքի մէջ ընկնելով, կամայ թէ ակամայ ուրանանք Նրան եւ մեր մեղքերով կրկին **«խաչը հանիր»**՝ ասած լինենք նրանց պէս: Ապաշխարութեան այս վերջին՝ Աւագ Շաբաթն օգտագործենք իրական ինքնամաքրումի եւ Քրիստոսին յաւիտենապէս մեր ներսի տաճարում վերադարձնելու համար: Թող Տէրն օգնական եւ առաջնորդ լինի ամենքիս:

Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

Your Donation to the church,

St Yeghiche Armenian Church Parish welcomes your donations for Palm Sunday, Holy Week and Easter Sunday prayers and your annual family membership contributions. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, 13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB. Please make your cheques payable to: **“St Yeghiche Armenian Church”**.

You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

Why should I support my Church?

The following appeared in the last Armenian Church Bulletin issued by the Diocese.

It should concern all of us individually.

Please read and consider your position.

At the annual meeting of the Armenian Church Trust (ACT) on Monday 2 December, the activities of the Armenian Church in the United Kingdom were presented, many of which have been described in previous bulletins. **One point that became clear was the increased scope and depth of the programs was made possible by the resources and opportunities of the new Arachnortaran guided by the Bishop and his active supporters.**

It was not a solo speech by the Bishop: those involved with the youth activities, Bible Studies, the Street Festival and lectures participated with their aspirations for the future. **Truly, our church is active and broadening its mission.**

There is, however, a negative aspect to this success that all community members should be aware of. **The Armenian Church Trust (ACT) is running a significant deficit amounting in the last accounts to £35,000. All this is only possible with the right level of funding.**

Currently reserves are being drawn but this cannot continue. Either the right level of financial support is forthcoming or the program has to be cut down significantly.

The situation is not confined to the overall diocesan level: it affects the individual parishes as well. Currently, the two London parishes have between them only less than 400 parishioner members whose annual dues have to support all their activities including church services. They too are having difficulties maintaining their work, let alone expand it. The 400 is such a small proportion of the community with a size of 14,000.

There is a prevailing view over many years that rich benefactors and trusts will give the necessary monies. That might have been true at one time, but no longer: the church needs continuous, dependable and consistent regular income from more sources.

Our clergy always stress to us that the church is not just the building, the clergy and the church services: it exists and thrives only through its congregations. **It is vital that the community does participates with their time and money to the church, without believing complacently that a few wealthy donors can be called on.** The church needs all its adherents and should not be restricted to such a small set of active people.

So when you enter a church for a service expecting the doors to be open, the building to be lit up and heated, a priest at the altar, candles in the vestry, a choir and organist performing - think of what it takes to make all this happen. We must not take all this for granted.

Firstly, please become a parishioner for one of the churches who will appreciate the generosity of your regular dues. Small annual amounts by many add up to a worthwhile level. The income from weddings and baptisms is not the reliable basis for sustained parish activities.

Secondly consider giving additional donations either to the parish or the ACT to sustain a thriving church in all its aspects. Do not just dip in and out of the church when you come expecting others to provide – you are an important member of the church too.

This is an issue for all the community and should not be avoided. Thank You

Please ask at St Yeghiche Church Desk for a copy of an application to register with our Parish.

ATTENTION

Due to Coronavirus (COVID 19) pandemic, we hereby inform our Congregation and Community members that St Yeghiche Armenian Church is closed for attendance until further notice.

This is in line with the policies and guidance of the British Government and the Spiritual directive of His Holiness Karekin II and with the blessing of our Primate.

You may follow our Sunday Divine Liturgy broadcast live on our Facebook page

<https://www.facebook.com/styeghiche>

We continue to offer memorial service prayers (Hokehankist). For your requests, please contact Mr Viken Haladjian on Parish office number 020 7373 8133 or his mobile number 07970 146 280 or email: info@styeghiche.org.uk

If you or anyone you know require spiritual care and counselling, please contact the Parish Office on 020 7373 8133.

May the Lord's blessing be with us all

St Yeghiche Armenian Church Parish Council

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

There are no memorial service request this Sunday

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէքի, հիւանդի այցելութեան, Սր Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին 07548 777 147:

You may follow our Sunday Divine Liturgy and all the Holy Week prayers broadcast live on our Facebook page

<https://www.facebook.com/styeghiche>

On Easter Monday ՄԵՌԵԼՈՑ, 13th April 2020, Blessing of the Graves will not take place at the cemetery, instead a special Hokehankist prayers will take place after Divine Liturgy at St Yeghiche Church starting at 11:00am.

If you wish to include the names of your loved ones in the Hokehankist Prayers, please contact the Parish office on 02073738133 or Email us at info@styeghiche.org.uk

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted:*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.